եղև Զատիկ և Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Ուրբաթ օրս (23 Ապրիլ) էր յիշատակ Սուրբ Գէորքայ, որ ասի ըստ բառի այլազգեացն՝ Խըտրբէլիազ. գնացաք մերայնօքս հանդերձ ի յՕրթաքոյն յուխտ Սուրբ Գէորքայ և անտի՝ ի Պէշիքտաշն, և էր ընդ մեզ Վարդանն և Զարդարն և Պետրոս Նոցա, և անդ կացաք։ Եւ ի Նոր Կիրակի (25 Ապրիլ) երեկոյիս եկաք ի տուն, և էր անձրև մեղմագոյն։ Բշի (26 Ապրիլ) ի դէմ երեկոյիս անցեալ զեռինքն եղև անձրև մեծ մինչև կէս ժամ և ապա էանց։ Եւ երեկոյիս՝ ի մէջ աղշամպաղուն և եաթսուին նստեալ կայի ի Մղտեսոցն, աղաղակ մեծ ելաւ թէ Երոցք կայ, և մեր ելեալ ի դուրս, տեսեալ զի եկեղեցի մեր էր որ այրէր, որ ասի Սուրբ Սարգիս. այրեցաւ և տանիսն ի վայր իջաւ և կանգնեալ մնաց չորս պատն։ Եւ հասեալ ի վերայ Նորա էնկիչէրիք և չորպաճիք ի մարել, ևս և Կուռճի Մէհէմէտ վէզիրն եկեալ մինչ ի Սուրբ Նիկողոս և ընդ առաջ Նորա եղեն մեծամեծք Նորա՝ թէ մարեցաւ, և նա եկեալ ընդ Վլանկայովն՝ անց գնաց։

Եւ առաւօտուս Գշի (27 Ապրիլ) խօսեցան իրիցունքն և ոմանք յիշխանացն ընդ սուպաշին թէ Զպատն փլուցենք որ չինենք, նա՛ մեծ լինի, և ասացին Նորա ըստակ. և յետ այնորիկ փոքր մի՝ երէցն եկեալ փլոյց և փոքր մի՝ մէկայլ երէցն, և այսպէս զդրան պատն և զհիւսիսոյ կողմի պատն փլուցին մինչև ի հիմն՝ յոյս[1]) ունելով թէ չինեսցի։ Եւ բռնաւորք քաղաքիս մըռմըռեալ՝ թէ Հայք վասն է՞ր զեկեղեցին այրեցին. վասն ճէրէմէ առնելոյ։

Եւ ի գիշերիս որ Դշի (28 Ապրիլ) լուսանայր՝ ի Քէպէճի խանն կայր մի մէչիտ Տաճկաց և նա այրեցաւ

1) յուս.